ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Նազենի Ղարիբյան

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Աստանա (Ղազախստանի Հանրապետություն), հունիսի 18-21-ը, 2018 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

  - ✓ *Մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների գիտական և ստեղծագործական մտավորականության XIII համաժողովին,*
  - ✓ *Մասնակցություն ՀՀԽ (Հումանիտար համագործակցության խորհուրդ) և ՀՀՄՀ (Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամ) վարչության համատեղ նիստին:*

2018 թվականի հունիսի 18-21-ը մեկնել էի Աստանա՝ որպես հայաստանյան պատվիրակության ղեկավար:

Հայաստանյան պատվիրակության կազմում էին՝ ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական, «Հրանտ Մաթևոսյան» մշակութային հիմնադրամի տնօրեն Դավիթ Մաթևոսյանը, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մնացականյանը, անիմացիայի ռեժիսոր, նկարիչ Նաիրա Մուրադյանը, Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի գիտական քարտուղար Նանե Բագրատունի-Ասատրյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սաթենիկ Մկրտչյանը, երիտասարդ գրող, հրապարակախոս Նորայր Սարգսյանը, «Հայ ֆեստ» փառատոնի միջազգային բաժնի ղեկավար Շողակաթ

Գալստյանը, դաշնակահար, երաժշտագետ, «ԱՐՏԿՈՆՑԵՊՏ» («ARTCONCEPT») միջազգային ասոցիացիայի նախագահ Արմեն Մանասյանը, ՀԲԸՄ հատուկ նախագծերի պատասխանատու, «Երաժշտական Հայաստան» նախագծի ղեկավար Ինեսա Մարգարյանը, ՀԲԸՄ հասարակայնության հետ կապերի պատասխանատու, «Երաժշտական Հայաստան» նախագծի PR մենեջեր Նարինե Հայրապետյանը, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության լրատվական խումբը (լրագրող՝ Լիլիթ Հայրապետյան և օպերատոր՝ Հակոբ Թումանյան):

Այցիս առաջին օրը՝ հունիսի 18-ին, Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում հանդիպում ունեցա արտակարգ և լիազոր դեսպան Արա Սահակյանի հետ: Ա. Սահակյանը ներկայացրեց Ղազախստանում հայ արվեստագետների գործունեությունը, քննարկեցինք հայկական մշակույթի հանրահռչակման հարցերը, երկկողմ մշակութային ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Նույն օրը երեկոյան հանդիպում ունեցա նաև ՌԴ Նախագահի միջազգային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ, ՀՀՄՀ վարչության համանախագահ Միխայիլ Շվիդկոյի, ՀՀՄՀ վարչության նախագահ, ՀՀՄՀ Գործադիր տնօրեն Անատոլի Իկսանովի, ՀՀԽ նախագահ, Տաջիկստանի Հանրապետության Նախագահի սոցիալական զարգացման և հասարակայնության հետ կապերի հարցերով օգնական Ռահմոնզոդա Աբդուջաբբորի, Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարար Արիստանբեկ Մուհամեդիուլի հետ: Հանդիպման ընթացքում ծանոթացա ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ անդամների հետ, քննարկեցինք ինչպես իրականացված, այնպես էլ նախատեսվող ծրագրերը, ՀՀՄՀ և ՀՀԽ շրջանակում համագործակցության հնարավորությունները:

Հաջորդ օրը՝ հունիսի 19-ին, մասնակցեցի ԱՊՀ մասնակից պետությունների ստեղծագործական և գիտական մտավորականության XIII համաժողովին: Համաժողովը, որն անցկացվում էր «Երկխոսությունը ԱՊՀ-ում՝ XXI դարի հումանիտար համագործակցության հեռանկարները» խորագրով, բացեց ՌԴ Նախագահի միջազ-

գային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյը: Ողջունելով կազմակերպիչներին և մասնակիցներին՝ նա ընթերցեց ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի ուղերձը: Այնուհետև Ղազախստանի Հանրապետության պետքարտուղար Գյուլշարա Աբդիկիկովան ընթերցեց Ղազախստանի Հանրապետության Նախագահ Նարսուլթան Նազարբաևի ողջույնի խոսքը: Բացման արարողության ժամանակ մասնակիցներին ողջունեցի նաև ես և մեկ անգամ ևս հրավիրեցի ս. թ. հուլիսի 7-8-ին մասնակցել «Գորիսը՝ 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի հանդիսավոր բացմանը: Ողջույնի խոսքով հանդես եկան մասնակից երկրների (Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Տաջիկստան, Մոլդովա, Ղրղզստան և Ռուսաստան) պատվիրակությունների ղեկավարները: ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղար Սերգեյ Լեբեդևի ուղերձը համաժողովին ընթերցեց ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղարի տեղակալ Ա. Սմագուլովը:

Այնուհետև տեղի ունեցավ «Համագործակցության աստղեր» մրցանակաբաշխությունը: Մրցանակաբաշխությանը ներկայացվել էր 11 թեկնածություն, և ժյուրին քվեարկության արդյունքնում ընտրել էր 8 լավագույնին՝ Ադրբեջանից, Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մոլդովայից, Ռուսաստանից, Տաջիկստանից: Հայաստանից «Մշակույթի բնագավառում ունեցած զգալի ավանդի համար» անվանակարգում մրցանակի արժանացավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ստեփան Շաքարյանը:

Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաև 2019 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք Բրեստի (Բելառուս) շնորհանդեսը. քաղաքի մասին պատմող ֆիլմ ցուցադրվեց, որը շարունակվեց «Բրեստը՝ 2019 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի տեսաներկայացումով: Շնորհանդեսն ավարտվեց երաժշտական կատարումով:

Կարճատև ընդմիջումից հետո սկսվեց «ԱՊՀ-ում միջմշակութային երկխոսություն. մշակույթի, գիտության, կրթության համար նոր հնարավորություններ» թեմայով

պլենար նիստը: Նիստի ընթացքում, որը վարում էր Միխայիլ Շվիդկոյը, քննարկվեցին հումանիտար համագործակցության բոլոր բնագավառներում մեր երկրների երկխոսության համար նոր հնարավորությունները. ԱՊՀ տարածքում միջմշակութային երկխոսության զարգացման համար անհրաժեշտ պայմանները, միջմշակութային երկխոսությունը՝ որպես Համագործակցության երկրների զարգացման ռեսուրս, մշակույթը և կրթությունը՝ որպես բարբարոսության և անհանդուրժողականության սպառնալիքների և մարտահրավերների պատասխան, ԱՊՀ երկրների լեզուների, մշակույթների, պատմության և ազգային ավանդույթների համապարփակ ուսումնասիրման համար մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունների, քաղաքացիական հաստատությունների միջև համագործակցության ընդլայնում, ԱՊՀ երկրների երիտասարդության շրջանում մշակույթի, գիտության, կրթության բնագավառում առաջատար տեխնոլոգիաների ակտիվ ներգրավման և գլոբալ տեղեկատվական և հաղորդակցության տարածության զարգացման պայմաններում համագործակցության նոր ուղիները:

Պլենար նիստին որպես հիմնական զեկուցող հանդես եկավ ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Դավիթ Մաթևոսյանը, ով առաջարկեց հայկական պատվիրակության անդամներին տրամադրել մեկական րոպե՝ քննարկվող թեմաների վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու համար: Սակայն Միխայիլ Շվիդկոյն առաջարկը չընդունեց՝ պատճառաբանելով, որ ժամանակը շատ սուղ է և նմանատիպ ցանկությամբ կարող են հանդես գալ բոլոր մասնակից պետությունները, նաև հավելեց, որ հաջորդ օրը նախատեսվող կլոր սեղանները մասնակիցներին կարծիք ներկայացնելու հնարավորություն կընձեռեն:

Նույն օրը երեկոյան կայացավ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի վարչության (ՀՀՄՀ) և Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) համատեղ նիստը: Նիստը վարում էր ՀՀՄՀ վարչության նախագահ Փոլադ Բյուլբյուլօղլին: Նիստին մասնակցում էին ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ

անդամներ, ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, Գործադիր քարտուղարի տեղակալ Ա. Սմագուլովը:

Օրակարգում ներկայացված էր 13 հարց:

1-ին հարցով միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

Օրակարգի 2-րդ հարցը վերաբերում էր ՀՀՄՀ ընթացիկ գործունությանը: Հաստատվեցին՝

- ՀՀՄՀ 2017 թ. հաշվապահական հաշվետվությունները,
- ՀՀՄՀ գործադիր տնօրինության պահպանման 2017 թ. ծախսերի հաշվարկների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը,
- ՀՀՄՀ 2017 թ. աջակցությամբ իրականացված միջոցառումների (ծրագրերի) իրականացման մասին հաշվետվությունը,
- 2018 թվականին ՀՀՄՀ աջակցությամբ իրականացվող միջոցառումների (նախագծերի) գործողությունների ծրագրի նոր տարբերակը,
- ՀՀՄՀ պայմանագրային աշխատանքների կանոնակարգը,
- ՀՀՄՀ անձնակազմի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի ձևաչափը:

Ներկայացվեց և ի գիտություն ընդունվեց՝

- ՀՀՄՀ 2017 թ. ծրագրերի իրականացման վերլուծական զեկույցը,
- 2018 թ. առաջին կեսի ՀՀՄՀ գործադիր տնօրինության պահպանման համար մասնակից պետությունների ներդրումների ստացման և ծախսման մասին տեղեկատվությունը:

Օրակարգի 3-րդ կետը վերաբերում էր ՀՀՄՀ 2019 թ. գործունեությանը: ՀՀՄՀ վարչության որոշման արձանագրությունը ներառվեց 2019 թ. ՀՀՄՀ գործադիր տնօրինությանը 635162 ռուբլու չափով աջակցելու հաստատումով, ինչպես նաև հաստատվեց 2019 թ. ՀՀՄՀ աջակցությամբ իրականացվող միջոցառումների (նախագծերի) գործողությունների ծրագիրը:

Օրակարգի 4-րդ հարցով քննարկվեցին «Համագործակցության աստղեր» և «Համագործակցության դեբյուտներ» մրցանակաբաշխությունները. ընդունվեցին և

հաստատվեցին «Համագործակցության դեբյուտ» միջազգային մրցանակաբաշխության կանոնակարգում կատարված փոփոխությունները, ինչպես նաև ի գիտություն ընդունվեց 2017 թ. «Համագործակցության աստղեր» միջպետական մրցանակաբաշխության քվեարկության արդյունքը:

ՀՀՄՀ 2018-2019 թթ. գործունեության, ՀՀՄՀ գործունեության օրենսդրական կանոնակարգման, ՀՀՄՀ 2017 թ. ֆինանսատնտեսական գործունեության մոնիթորինգի, ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ խորհրդի հանձնարարությունների կատարման մասին զեկուցեց ՀՀՄՀ Գործադիր տնօրեն Անատոլի Իկսանովը (օրակարգի 5-րդ հարց):

Նա տեղեկացրեց, որ մշտապես խնդիր կա Գործադիր տնօրինության պահպանման ծախսերը հոգալու հարցում, ինչը պայմանավորված է անդամ երկրների մի մասի կողմից անդամավճարների վճարումը դադարեցնելու (Բելառուս), մասամբ վճարելու (Ղրղզստան) կամ չվճարելու (Մոլդովա, Ուզբեկստան):

Գործադիր տնօրենը ներկայացրեց նաև ՀՀՄՀ 2018 թ. առաջին կեսի կատարված աշխատանքները, տեղեկացրեց, որ ծրագրերի իրականացման պատկերը գոհացնող է: Միաժամանակ հայտնեց, որ ձևավորել է նաև 2019 թ. ծրագիրը:

Օրակարգի 6-րդ հարցով քննարկվեց Տաջիկստանի Հանրապետության առաջարկությունը «Համագործակցության մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի շրջանակում 2021 թվականին Դուշանբե քաղաքը ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հայտարարելու առաջարկը: Հաստատվեց սահմանված կարգով ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի և ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհուրդների հաստատմանը ներկայացնելու առաջարկը:

Օրակարգի 7-12-րդ հարցերով քննարկվեցին ԱՊՀ անդամ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության XIV ֆորումի անցկացման վերջնաժամկետը և վայրը, ԱՊՀ երկրների պետությունների ղեկավարների խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի «Անկախ պետությունների համագործակցությունը ժամանակակից իրողությանը հարմարեցման մասին» որոշման կատարումը, ՄԱԿ-ի

մասնագիտացված կազմակերպությունների հետ կապերի հետագա ընդլայնման և փոխգործակցության խորացման, 2017 թվականին ԱՊՀ երկրների ոլորտային համագործակցության մարմինների գործունեության արդյունքների, «Միաձայնություն. Համագործակցության երկրների գրականություն և լրագրություն» ինտերնետ ծրագրի կարգավիճակի, ԱՊՀ անդամ պետությունների ուսուցիչների համաժողովը (հոկտեմբերի 4-5-ը) Բիշքեկում և ԱՊՀ երկրների գիտնականների երկրորդ համաժողովը (հոկտեմբերի 15-16-ը) Երևանում անցկացնելու վերաբերյալ հարցերը:

Օրակարգի եզրափակիչ հարցը վերաբերում էր ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ հերթական նիստին: ՀՀՄՀ փոխնախագահ Միխայիլ Շվիդկոյը առաջարկեց նիստն անցկացնել 2018 թ. ձմռանը Մոսկվայում:

Հաջորդ օրը՝ հունիսի 20-ին, համաժողովը շարունակեց իր աշխատանքը 4 թեմատիկ սեկցիաներով՝ «Աստանայի լավագույն փորձը մշակութային ինստիտուտների կայացման և զարգացման հարցում», «ԱՊՀ-ում մշակութային տարվա շրջանակում իրականացված համագործակցությունն ու միտումները», «Կրթության հասանելիությունը՝ պատմությունն ու հեռանկարները», «Ապագա սերունդը՝ շարունակականությունն ու նորարարությունը»:

Մասնակիցների ընդհանուր քանակը կազմում էր շուրջ 200 մարդ:

Հայկական պատվիրակությունը, որը հավասարապես ներկայացված էր բոլոր սեկցիաներում, առանձնանում էր իր ակտիվությամբ: «ԱՊՀ-ում մշակութային տարվա շրջանակում իրականացված համագործակցությունն ու միտումները» կլոր սեղանի քննարկումների հայկական պատվիրակության անդամներ՝ դաշնակահար Արմեն Մանասյանը և Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի գիտական քարտուղար Նանե Բագրատունի-Ասատրյանը, հանդես եկան առաջարկներով: Ա. Մանասյանն առաջարկեց համագործակցության շրջանակում իրականացնել միջոցառումներ՝ համատեղելով արվեստի տարբեր ոլորտները՝ օրինակ բերելով ցուցահանդեսների ժամանակ հնչող երաժշտական կենդանի կատարումները:

Ն. Բագրատունին էլ իր հերթին առաջարկեց ամեն տարի Համագործակցության մեկ երկրում կազմակերպել նշյալ երկրի ավանդույթները ներկայացնող միջոցառում, նշելով հայկական հացի՝ լավաշի պատրաստման արարողությունը: Առաջարկներն ընդունվեցին ոգևորությամբ: Գրող Նորայր Սարգսյանը ներկայացրեց մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» ծրագիրը, կայացավ նաև «Երաժշտական Հայաստան» նախագծի շնորհանդեսը, որը կազմակերպել էին ՀԲԸՄ աշխատակիցներ Ինեսա Մարգարյանը և Նարինե Հայրապետյանը: Նախագծին մասնակցելու նպատակով ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչները հրավիրվեցին Հայաստան:

«ԱՊՀ-ում մշակութային տարվա շրջանակում իրականացված համագործակցությունն ու միտումները» կլոր սեղանի վարողը, ամփոփելով աշխատանքների արդյունքները, նշեց, որ Համագործակցության շրջանակում բազմակողմ մշակութային, ստեղծագործական նախագծերի համատեղ իրականացումը և միջմշակութային երկխոսության ակտիվացումը նոր գաղափարների և լուծումների միջոցներով կնպաստի հումանիտար փոխգործակցության բոլոր ոլորտների և ԱՊՀ անդամ պետությունների ընդհանուր զարգացման ներուժի ամրապնդմանը:

ԱՊՀ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության համաժողովն ավարտեց իր աշխատանքները հունիսի 20-ին: Ընդունվեց համաժողովի եզրափակիչ փաստաթուղթը:

Նույն օրը ներկա գտնվեցի Ղազախստանի ազգային արվեստի համալսարանի ուսանողների համերգին և «Համագործակցության աստղեր» մրցանակի դափնեկիր, Ղազախստանի ազգային արվեստի համալսարանի ռեկտոր Այման Մուսախոջաևայի կողմից կազմակերպված ընդունելությանը:

Ս. թ. հունիսի 21-ին վերադարձա Երևան:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱՊՀ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության համաժողովի

1. Հայաստանյան պատվիրակությունը ակտիվ մասնակցեց համաժողովի աշխատանքներին:
2. ՀՀ ժողովրդական արտիստ Ստեփան Շաքարյանն արժանացավ «Համագործակցության աստղեր» մրցանակին:

ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ համատեղ նիստի

1. Ընդունվեց ՀՀՄՀ 2017-2018 թթ. կատարված աշխատանքի մասին հաշվետվությունը:
2. Հաստատվեցին ՀՀՄՀ 2017 թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքները, ի գիտություն ընդունվեց հանձնարարականների կատարման մասին տեղեկությունը:
3. Հաստատվեց 2018 թ. ՀՀՄՀ ծրագրային պլանը:

Կցանկանայի շնորհակալություն հայտնել Ղազախստանի Հանրաեթությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը՝ արտակարգ և լիազոր դեսպան Արա Սահակյանի գլխավորությամբ՝ Աստանա այցի ընթացքում հայկական պատվիրակությանը մշտապես աջակցելու և միջոցառումներին ներկա գտնվելու համար:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝

Ն. ՂԱՐԻԲՅԱՆ